Առաջարկություններ և առարկություններ՝ ՀՀ վարչապետի հանձնարարականով ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովին 2022 թվականի փետրվարի 8-ին N 725/2022 գրությամբ ներկայացված <<Գովազդի մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքների նախագծերի վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը ներկայացված նախագծերի փաթեթը համարում է անընդունելի:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ:

1. Բնակչության շրջանում դեղերի արտադրանքի վերաբերյալ պատշաճ իրազեկման կարիք բացարձակապես չկա և չի կարող լինել, քանզի դեղը ստեղծվել է, որպես բժշկի կողմից օգտագործվող միջոց հիվանդների բուժման համար, իսկ բժիշկը գովազդային վահանակների միջոցով դեղի մասին ինֆորմացիա ստանալու կարիք չունի: Դեղի նշանակման ժամանակ բժիշկը հիմնվում է միմիայն ապացուցողական բժշկության գիտական փաստերի վրա, որոնք չեն պարունակում գովազդային տարրեր:
2. Ներկայումս, ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում խստացվել են դեղերի գովազդի պահանջները: ԵՄ բոլոր երկրներում արգելվում է դեղի որևէ տեսակի գովազդ: Կանադայում արգելվում է դեղի նույնիսկ հեռուստառադիո գովազդը, իսկ Շվեյցարիայում՝ ցանկացած դեղի ուղիղ գովազդը: Նման խստացումների պատճառ է հանդիսացել մահացության աճը՝ հիվանդի կողմից ինքնաբուժման հետևանքով: Համաձայն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տվյալների՝ ինքնաբուժումը համաշխարհային ''սպառնալիքների վարկանիշում'' զբաղեցնում է հինգերորդ տեղը՝ զիջելով միայն վնասվածքներին, սիրտանոթային, ուռուցքային և թոքային հիվանդություններին: ՌԴ-ում ինքնաբուժումը և դեղերի առանց պատշաճ հսկման ընդունումը ևս աճում է, ինչի հիմնական պատճառներից մեկը ինչպես և վերոհիշյալ երկրներում՝ հանդիսանում է դեղի անհարկի գովազդը բնակչության շրջանում:

3. Դեղերի ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գովազդի ոլորտում հավասար մրցակցային դաշտը ներկայումս կարգավորվում է ՀՀ ''Դեղերի մասին'' օրենքի 8-րդ գլուխի ''Դեղերի մասին տեղեկատվությունը և գովազդը'' 27-րդ և 28-րդ հոդվածներով: Գործող օրենքի նշյալ հոդվածները լիովին ապահովում են մրցակցային դաշտի հավասարությունը և համահունչ են տվյալ ոլորտում միջազգային նորմերին: Բացի այդ, գովազդային վահանակների միջոցով դեղի գովազդը չի հանգեցնելու ոլորտի մրցակցային դաշտի ապահովմանը և հակառակը՝ այն կառաջացնի բացասական ազդեցություն՝ էլ ավելի խորացնելով անհավասարությունը դեղերի ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների միջև:
4. Դեղը ինքնին չի հանդիսանում սովորական ապրանք, այլ ստեղծված է ծառայելու մեկ նպատակի՝ օգնել բժշկին բուժել հիվանդին: Բացի նեղ մասնագիտական հարթակներից, դեղի մասին տեղեկատվությունը կամ գովազդը հանրության առավել լայն հարթակներում անհիմն է և իր մեջ պարունակում է ռիսկեր, ինչպիսիք են՝ դեղի անհարկի և առանց բժշկի ցուցման կիրառման հետևանքով ընդհուպ մինչև առողջությանը անդառնալի վնասի հասցնում: Դեղի կիրառման ժամանակ պարտադիր է համապատասխան հետազոտություններ և հիվանդության ճշգրիտ ախտորոշում, որը հիմնված է լաբորատոր գործիքային ախտորոշման անհրաժեշտության վրա: Առավել լայն հարթակներում դեղագործական արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության տարածումը՝ այն է գովազդային վահանակի միջոցով դեղի գովազդը, հանգեցնելու է ավելի մեծ քանակի մարդկանց ինքնաբուժման՝ ինչի դեմ պայքարում է ողջ համաշխարհային բժշկական հանրությունը և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը:
5. Բացի վերոնշյալ առարկություններից ներկայացված նախագծերի փաթեթն ունի իրավական թերություններ: Մասնավորապես՝ <<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> նախագծի վերնագիրը պետք է լինի <<Դեղերի մասին>> օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>>: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 28-րդ հոդվածի 2-րդ մասում <<վերջին նախադասությունն ուժը կորցրած ճանաչելու>> բառերի փոխարեն հարկ է արձանագրել <<Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 28-րդ հոդվածի 2-րդ մասում

վերջին նախադասությունը հանել>> բառերը: Բացի նշյալից <<Գովազդի մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> նախագծի վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը: Այն պետք է լինի <<Գովազդի մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> վերնագրով: Իսկ <<Գովազդի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում կատարվող լրացումը պետք է համապատասխանեցվի <<Դեղերի մասին>> օրենքի 28-րդ հոդվածի հետ: